ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 215 - Ա

30 մարտի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՍՈՂԱՆՔՆԵՐԻ, ՎԹԱՐԱՅԻՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ՓԼՈՒՋՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքում 2022 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, սողանքների, քարաթափումների տեղամասերն ու վթարային կամուրջները հաշվառելու, անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու, արտակարգ իրավիճակներում վնասների նվազեցման և հետևանքների վերացման աշխատանքներն օպերատիվ կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն կից հավելվածի:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) մինչև 2022 թվականի ապրիլի 7-ը սույն որոշմամբ ստեղծված հանձնաժողովին ներկայացնել տեղեկատվություն համայնքների հնարավոր հեղեղավտանգ, սելավավտանգ, սողանքավտանգ տեղամասերի, հնարավոր քարաթափումների ու վթարային կամուրջների վերաբերյալ և առաջարկություններ՝ հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ու հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների մասին՝ համաձայն կից ձևի.

2) հաշվառել համայնքներում առկա սարքին ինժեներական տեխնիկաները /մղաններ, էքսկավատորներ, ինքնաթափեր և այլն/ և ձեռք բերել պայմանավորվածություններ՝ անհրաժեշտության դեպքում դրանք օգտագործելու վերաբերյալ:

3. Հանձնաժողովին /նախագահ՝ Ռուբիկ Նավոյան/՝ հնգօրյա ժամկետում վերլուծել համայնքներից ստացված տեղեկատվությունը, կազմել մարզում 2022 թվականի ընթացքում կանխատեսվող գարնանային հեղեղումների, վթարային կամուրջների փլուզման, հնարավոր քարաթափումների, սողանքավտանգ տարածքներում սպասվող հնարավոր վտանգների նվազեցման, հետևանքների վերացման միջոցառումների պլան- ժամանակացույցը և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հաստատմանը:

30.03.2022

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2022 թվականի մարտի 30-ի
N 215-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՍՈՂԱՆՔՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԵՐՆ ՈՒ ՎԹԱՐԱՅԻՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԸ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՎՆԱՍՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Նավոյան Ռուբիկ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, նախագահ
Գալստյան Գևորգ	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ /համաձայնությամբ/
Սարդարյան Արտաշ	- «Գեղարքունիք» ՋՕԸ գործադիր տնօրեն /համաձայնությամբ/
Հարությունյան Վանիկ	- մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
Զոհրաբյան Արմեն	- մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
Պետրոսյան Մարտին	- մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Պլան-ժամանակացույց

_____ համայնքում 2022թ. կանխատեսվող գարնանային հեղեղումների, սելավների, սողանքների, վթարային կամուրջների և հնարավոր քարաթափումների տեղամասերում սպասվող հնարավոր վտանգների նվազեցման և հետևանքների վերացման միջոցառումների

Հեղեղավտանգ տարածքներ

Հ/Հ	Համայնքի անվանումը	Գետի, հեղեղատարի անվանումը	Ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված առավելագույն վտանգավոր հատվածներում կանխարգելիչ անհրաժեշտ աշխատանքների բնութագիրը	Ֆինանսավորման աղբյուրը /Գումարի չափը (հազ. դրամ)/	Հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներ	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Նշումներ

Վթարային կամուրջներ

Հ/Հ	Համայնքի անվանումը	Կամուրջի տեղակայման վայրը	Ուսումնասիրությունների արդյունքը՝ վթարային կամուրջի վերաբերյալ	Կանխարգելիչ անհրաժեշտ աշխատանքներ	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը /Գումարի չափը (հազ. դրամ)/	Պատասխանատու	Նշումներ

Սողանքավտանգ տարածքներ

Հ/Հ	Հաստատության անվանումը	Սեռանշանների տարածքը /կա/ չկա/	Ուսումնապատրաստության ներսի սենյակների տարածքների գոնվող սենյակում վիճակի բնակի տների վիճակի վերաբերյալ	Կանխարգելիչ անհրաժեշտ աշխատանքների իրականացման ամիսները	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Նշումներ կատարման մասին

Քարտեզագրման տեղեկատվություն

| | Հասցե | | | | | | |